

Հարցաթերթ
Աշխարհագրություն առարկայի օլիմպիադա
դպրոցական փուլ – 2020թ.
/ տևողությունը – 120 րոպե/

9 – րդ դասարան

Ընտրովի պատասխանով առաջադրանքներ

1. **Ջուգահեռականների մասին n^o ր պնդումն է ճիշտ.**
 1. ամենաերկարը 90^o զուգահեռականն է,
 2. ամենաերկարը 45^o զուգահեռականն է,
 3. ամենաերկարը 0^o զուգահեռականն է,
 4. բոլորն իրար հավասար են:
2. **Նստվածքային ծագման ապար չէ.**
 1. քարածուխը
 2. կրաքարը
 3. մարմարը
 4. տորֆը
3. **Աշխարհագրական երկայնությունները լինում են.**
 1. 0 – 360^o
 2. 0 – 270^o
 3. 0 – 90^o
 4. 0 – 180^o
4. **Ֆրանսիացիների կրոնական հիմնական ուղղությունն է.**
 1. բողոքականությունը
 2. կաթոլիկությունը
 3. ուղղափառությունը
 4. կոնֆուցիականությունը
5. **Հարավային բևեռում կանգնած մարդը բևեռային աստղը որտե՞ղ կտեսնի.**
 1. 90^o անկյան տակ
 2. 0^o անկյան տակ
 3. հարավային արևադարձի վրա
 4. չի տեսնի
6. **N^o ր պնդումն է ճիշտ.**
 1. ցամաքն արագ տաքանում է և արագ սառչում,
 2. ջուրը դանդաղ տաքանում է և արագ սառչում,
 3. ցամաքն արագ տաքանում է և դանդաղ սառչում,
 4. ջուրն արագ տաքանում է և արագ սառչում:
7. **<<Գետ – մայրցամաք>> զույգերից ընտրել սխալը.**
 1. Դնեպր – Եվրասիա
 2. Մուրեյ – Ավստրալիա
 3. Կոլորադո – Հյուսիսային Ամերիկա
 4. Կոլումբիա – Հարավային Ամերիկա
8. **N^o ր պնդումն է սխալ.**
 1. Վերարտադրությունը կոչվում է պարզ, եթե ծնելիությունը հավասար է մահացությանը:
 2. Ջարգացող երկրներին բնորոշ է լայն հիմքով և նեղ գագաթով սեռատարիքային բուրգը:
 3. Եվրոպական երկրներին բնորոշ է բնակչության վերարտադրության առաջին տիպը:
 4. Ջարգացած երկրների բնակչության սեռային կազմում գերակշռում են տղամարդիկ:
9. **Ծնելիության և մահացության տարբերությունը կոչվում է.**
 1. բնակչության վերարտադրություն
 2. բնակչության միգրացիա
 3. բնակչության բնական աճ
 4. բնակչության մեխանիկական աճ
10. **ՀՀ n^o ր մարզում է գտնվում Խոսրովի արգելոցը.**
 1. Տավուշի
 2. Արարատի
 3. Սյունիքի
 4. Շիրակի
11. **ՀՀ – ում սննդի արդյունաբերության մասնագիտացված ենթաճյուղերից չէ.**
 1. պահածոների արտադրությունը
 2. գինու – կոնյակի արտադրությունը
 3. հանքային ջրերի արտադրությունը
 4. ձեթի – յուղի արտադրությունը

12. ՀՀ – ում տեկտոնական ծագում ունի.

1. Սևանա լիճը 2. Արփի լիճը 3. Քարի լիճը 4. Պարզ լիճը

13. Արցախի Հանրապետությունը հռչակվել է.

1. 1991թ. հուլիսի 5-ին 2. 1991թ. սեպտեմբերի 2-ին
3. 1991 թ. մայիսի 9-ին 4. 1991 թ. մայիսի 28-ին

14. Ոչ նյութական արտադրության ոլորտի ճյուղ չէ.

1. առողջապահությունը 2. շինարարությունը
3. կրթությունը 4. գիտությունը

15. Արևելյան Եփրատ (Արածանի) գետի մասին ո՞ր պնդումն է ճիշտ.

1. Նրա հովտում գտնվում է Կարինի (Կարնո) դաշտը:
2. Նրա հովտում գտնվում է Բասենի դաշտը:
3. Սկիզբ է առնում Ծաղկանց կեռներից:
4. Սկիզբ է առնում Ծաղկավետ լեռնազանգվածից:

Կարճ պատասխանով առաջադրանքներ

16. Հասարակածի վրա երկու կետերի իրական հեռավորությունը կազմում է 1221 կմ:
Որքա՞ն կլինի դրանց հեռավորությունը քարտեզի վրա աստիճաններով:
17. Վայրի աշխարհագրական կոորդինատներն են՝ հվ. լ. $20^{\circ} 30'$ և արլ. ե. $68^{\circ} 30'$:
Որոշել Արեգակի ճառագայթների անկման անկյունը աստիճաններով, հունիսի 22 – ին, կեսօրին:
18. Օդի հարաբերական խոնավությունը 50 % է, իսկ բացարձակ խոնավությունը՝ 20 գ/մ^3 :
Որքա՞ն ջուր է պետք տվյալ ջերմաստիճանում այն հազեցնելու համար (գ/մ^3):
19. Երկրի բնակչության թիվը 2 400 000 մարդ է, իսկ տարածքը՝ 48 000 կմ²: Որքա՞ն կկազմի
բնակչության միջին խտությունը (մարդ/ կմ²):
20. Երկրի մակերեսը կազմում է 30 000 կմ², իսկ տրանսպորտային ուղիների երկարությունը՝
60 000 կմ: Որոշել տրանսպորտային ցանցի միջին խտությունը (կմ / կմ²):

Առարկայական հանձնաժողովի նախագահ՝

Արսեն Գրիգորյան